

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ
2401 «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ)»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
«ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՐՈՐԴ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**

ԵՐԵՎԱՆ 2009 թ.

Հաստատում եմ

Ուսումնական հաստատության անվանումը

Կրթիչի անունը՝

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

(ԱՐԴԵՏԱԳՈՐԾԱԿԱՆ)

Տնօրեն

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝ ԱՎՏՈՄԵԹԵՆԱՅԻ

ՎԱՐՈՐԴ

«___» _____ 200

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Կրթիչի անունը՝

ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԼՐԻՎ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 ՏԱՐԻ

Կրթիչի անունը՝ ԱՌԿԱ

«ԱՎՏՈՄԵԹԵՆԱՅԻ ՎԱՐՈՐԴ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 2401 «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ (ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ)»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԺԱՄԱՆԱԿԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՔԱՑՆԵՐՈՎ

Կուրս	Սեպտեմբեր				Հոկտեմբեր			Նոյեմբեր				Դեկտեմբեր				Հունվար			Փետրվար				Մարտ				Ապրիլ				Մայիս				Հունիս				Հուլիս				Օգոստոս				II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/								
	1	8	15	22	6	13	20	3	10	17	24	1	8	15	22	5	12	19	26	2	9	16	23	6	13	20	27	1	8	15	22	4	11	18	25	7	14	21	28	2	9	16	23	Տեսական ուսուցում	Մոդուլների ամփոփում	Պրակտիկա	Ամփոփիչ պետական արհեստ. նախապ	Ամփոփիչ պետական ատեստավորում	Արձակուրդ	Ընդամենը					
I	7	14	21	28	5	12	19	26	2	9	16	23	6	13	20	27	1	8	15	22	5	12	19	26	2	9	16	23	6	13	20	27	1	8	15	22	4	11	18	25	7	14	21	28	3	10	17	24	32	2	6	1	1	10	52



Տեսակա
ն



Ուսումնական
արակտիկա
տեսական
ուսուցմանը



Ուսումնական
արակտիկա առանց
տեսական
ուսուցման



Նախաավարտական,
արտադրական
արակտիկա



Մոդուլների
ամփոփում



Նախապատրաս
տում ամփոփիչ
պետական
ատեստավորման



Ամփոփիչ
պետական
ատեստավորում



Արձակուրդ

ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

№	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեսավորումը ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումը ըստ կուրսերի	
		Գրքեր	Ստուգված	Թյուրաբանական աշխատանք	Պարտադիր լսարանային բեռնվածություն				I կուրս	
					Ընդհանուր	Այդ թվում			I կիսամյակի շաբաթ	II կիսամյակի 15 շաբաթ
Տեսակ անուցում	Լաբորատոր և գործնական աշխատանք	Սեմինար պարապմունք								
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ										
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		1,2		72	24		48	36	36
2.	Օտար լեզու		1,2		60	20		40	36	24
3.	Իրավունքի հիմունքներ		1		36	18		18	36	
4.	Քաղաքագիտություն և սոցիոլոգիայի հիմունքներ		1		18	18			18	
5.	Պատմություն		1,2		36	16		20	36	
6.	Ֆիզիկական կուլտուրա		1,2		64	4	60		34	30
	ԸՆԴԱՄԵՆԸ				286	100	60	126		
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ										
1	Էկոլոգիայի հիմունքներ				36	18		18	36	
2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		1		18	10	8		18	
	ԸՆԴԱՄԵՆԸ				54	28	8	18		
ԱՈՒՍՏՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ										
1	Անվտանգություն և առաջին օգնություն		1		36	20	16		36	
2	Հաղորդակցություն		1		36	8	28		36	
3	Աշխատանքային խնդիրներ		2		36	12	24			36
4	Համակարգչային օպերատորության հիմունքներ		1		36	6	30		36	
	ԸՆԴԱՄԵՆԸ				144	46	98			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ										
1	Ավտոմոբիլային տրանսպորտի մասին ՀՀ օրենքի հիմնադրույթներ, վարորդի իրավունքները և պարտականությունները		1		54	24	30		54	
2	Ավտոմեքենայի ընդհանուր կառուցվածքը	1	2		124	48	76		90	34
3	Ավտոմեքենայի էլեկտրական սարքավորումներ		2		36	12	24			36
	ԸՆԴԱՄԵՆԸ				214	84	130			
ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ										
1	Ճանապարհային երթևեկության կանոններ	2	1		112	40	72		36	76
2	Ավտոմեքենայի անվտանգ վարման հմտություններ	2			54	8	46			54
3	Բեռների դասակարգումը, բեռնման - բեռնաթափման աշխատանքների հմտությունները		2		46	22	24			46

4	Փոխադրումների գործընթացներ և փաստաթղթաշրջանառություն	1			72	34	38		72	
5	Ավտոմեքենաների շահագործումն արգելող անսարքությունները ու պայմանները	2			46	24	22			46
				ԸՆԴԱՄԵՆԸ						
					330	128	202			
				ԸՆՏՐՈՎԻ						
					72					72
	Պահուստային ժամաքանակ				52				2	50
				ԸՆԴԱՄԵՆԸ						
				ԸՆԴԱՄԵՆԸ	124					
					1152					
	Խարհրդատվություններ				100					
				ԸՆԴԱՄԵՆԸ	1252					
									612	540
	Շաբաթվա ժամերի քանակը								36	36

ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				№	ԱՆՋՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՉԵՍԱԼՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Վառելիքաքսանյութեր և տեխնիկական հեղուկներ				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
2				1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների
3				2	Օտար լեզվի
4				3	Իրավունքի հիմունքներ
5				4	Պատմության
				5	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի
				6	Էկոլոգիայի
	ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	7	Ավտոմեքենայի վարման հմտությունների
1	Արտադրական պրակտիկա	II	6	8	Փոխադրումների կազմակերպման
				9	Բեռնման բեռնաթափման միջոցների և բեռնագիտության
				10	Ավտոմեքենայի կառուցվածքի
	ԸՆԴԱՄԵՆԸ		6	11	Աշխատանքի անվտանգության
				12	Անհատական համակարգիչների
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ Համալիր քննություն մասնագիտական մոդուլներից					ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
				1	Ավտոմեքենայի վարման հմտությունների
					ԱՐՉԵՍԱԼՈՑՆԵՐ
				1	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման
				1	Ավտոմեքենայի վարման համար ավտոհրապարակ
					ՍԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Սպորտային համալիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Սովորողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 սովորող, ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է ուսումնական հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատվում է ուսումնական հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամեր հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնական կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՈԱԶԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

Մողուլի դասիչը՝ ԱԱՕ – 3 – 08 – 001

Մողուլի տևողությունը՝

Տեսական ուսուցում՝ 20 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 16 ժամ

Մողուլի նպատակը՝

Այս մողուլի նպատակն է սովորողներին աշխատանքի անվտանգության և առաջին օգնության վերաբերյալ համապատասխան գիտելիքներ մատուցելը, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության և առաջին օգնության միջոցառումների կազմակերպման վերաբերյալ հմտություններ զարգացնելը:

Մուտքային պահանջները՝

Չկան

Ուսումնառության արդյունքները

Այս մողուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. Ներկայացնի աշխատանքի անվտանգության իրավական և կազմակերպչական դրույթները:
2. Բացատրի անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները:
3. Բացատրի արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները:
4. Ներկայացնի առաջին օգնության կազմակերպումը և անհրաժեշտ միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1. Գիտի աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները:
2. Գիտի աշխատանքի անվտանգության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը:
3. Գիտի աշխատանքի անվտանգության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը:
4. Գիտի աշխատանքի անվտանգության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
5. Գիտի դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը:
6. Գիտի տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի անվտանգության նորմերի պահպանման համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե սովորողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բացատրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Գիտի տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները:
2. Գիտի էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը:
3. Գիտի հրդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը:
4. Գիտի ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:
5. Գիտի թունաքիմիկատների և այլ վտանգավոր նյութերի հետ աշխատանքի կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Սովորողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Բացատրել արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Պատկերացնում է արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները:
2. Գիտի արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները:
3. Գիտի արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները:
4. Գիտի արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:
5. Աշխատանքի ընթացքում պահտպանում է անհատական հիգիենայի կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից սովորողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի բաղադրիչները.

- ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝
 - ջերմաստիճանը
 - հարաբերական խոնավությունը
 - փոշու առկայությունը
- բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝
 - օդափոխություն
 - ջեռուցում
 - ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսումնական պրոցեսում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել առաջին օգնության կազմակերպումը և անհրաժեշտ միջոցները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Գիտի ճիշտ կատարել արհեստական շնչառություն:
2. Գիտի ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում:
3. Գիտի դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ:
4. Գիտի կտրվածքների վիրակապման կարգը:
5. Ճիշտ է կատարում առաջին օգնությունն այրվածքների դեպքում:
6. Ճիշտ է կատարում առաջին օգնությունն էլեկտրահարման դեպքում:
7. Թունավորումների դեպքում առաջին օգնությունը ճիշտ է կատարում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝

ԱՀՀ 3 – 08 - 001

Մոդուլի տևողությունը՝

Տեսական ուսուցում՝ 8 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 28 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ զարգացնել և ամրապնդել հաղորդակցության ունակությունները, ինքնավստահությունը, արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվելու կարողությունը՝ աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում:

Մուտքային պահանջները՝

Չկան

Ուսումնառության արդյունքները

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Կարողանա սահմանել ուսումնառության անձնական նպատակները:
2. Կարողանա բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին:
3. Կարողանա նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ:
4. Կարողանա կատարել փաստաթղթավորում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր արդյունքի համար բավարար առաջադիմության ապահովումը վկայում է ընդհանուր գնահատման համար անհրաժեշտ անցումային միավորի ձեռք բերման մասին:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 Սահմանել ուսումնառության անձնական նպատակները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
2. Ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
3. Ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները, ինչպես օրինակ՝
 - անհատական
 - խմբային

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողը կներկայացնի հակիրճ զեկույց, որտեղ կարտահայտի իր անձնական պատկերացումները ուսումնառության նպատակների և գործընթացների, ինչպես նաև ուսումնառության տարբեր եղանակների մասին: Այդ գրավոր խոսքը պետք է պարունակի ոչ ավելի, քան 50 բառ:

Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Ճիշտ է ներկայացնում բանավոր և գրավոր խոսքը, պահպանելով համապատասխան կառուցվածքը:
2. Հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ:
3. Տեղեկատվության առանձնացում/խմբավորումը նպատակային է կատարում:
4. Հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողին կհանձնարարվի որևէ պարզ թեմա և/կամ ոչ գեղարվեստական տեքստ, ըստ որի նա պետք է կազմի մեկ կամ մի քանի մասից բաղկացած գրավոր հաղորդում և կատարի բանավոր ներկայացում: Այդ գրավոր խոսքը պետք է պարունակի ոչ ավելի, քան 50 բառ, իսկ բանավոր ներկայացումը պետք է տևի մոտ մեկ րոպե: Լրացուցիչ ժամանակ պետք է տրամադրվի նաև հարցերի համար, և ուսանողը պետք է իր կարծիքը արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետների կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստի կամ օգտագործված աղբյուրի բնութագիր, որը կարող է ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք ունենալ: Կատարման բոլոր չափանիշները պետք է ձեռք բերվեն և գրավոր, և բանավոր խոսքի ընթացքում միաժամանակ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3 Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- Ծիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են.
 - պարզաբանումներ ստանալու ձգտումը,
 - գրառումներ կատարելը,
 - ամփոփելը,
- Ազատ կերպով ձևակերպում, արտահատում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- Ցուցաբերում է հանդեպի հատկություն,
- Կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Կներկայացվի տեքստ, որը նկարագրում է որևէ ոչ միանշանակ իրավիճակ, խնդիր և/կամ գաղափար: Սովորողը կընդգրկվի երկու և/կամ ավելի հոգուց կազմված խմբում, որի անդամներից մեկը կարող է լինել դասավանդողը: Քննարկման համար տրվող առավելագույն ժամանակը 3 րոպե է (յուրաքանչյուր մասնակցի համար): Սովորողը պետք է ամենամահիրաժեշտ տեղեկություն տա տեքստում առկա հարցերի մասին և խմբի անդամներին ներկայացնի իր տեսակետները և նկատառումները: Այն կարող է լինել մեկ տեսակի տեղեկատվություն և/կամ փաստացի նկարագրություն:

Գնահատման համար հատկապես պետք է ուշադրություն դարձվի ուսանողի կողմից դիմացինի տեսակետը լսելու և դրանից հետևություններ անելու հմտությանը: Անհրաժեշտ է կազմել համատեքստի կամ օգտագործված աղբյուրի բնութագիր, որը կարող է ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք ունենալ: Քննարկումը ըստ դասավանդողի հայեցողության կարող է փոխարինվել տրված թեմայով հարցազրույցի:

Բոլոր կատարման չափանիշներն էլ պետք է ձեռք բերվեն մեկ առաջադրանքի շրջանակում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 2 ժամ
 Գործնական պարապմունք` 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կատարել փաստաթղթավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- Ծիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը` ըստ նրանց նշանակության:
- Ծիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը:
- Ծիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողին կհանձնարարվեն կազմել տարբեր տեսակի փաստաթղթեր, ինչպիսիք են.

- դիմում,
- ինքնակենսագրություն (տրված տարբեր տեսակի ֆորմատներով),
- աշխատանքային հաղորդագրություններ,
- պահանջների հայտեր,
- գործնական նամակներ:

Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, տարբեր տեսակի փաստաթղթերի օրինակներ:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 2 ժամ
 Գործնական պարապմունք` 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ»

Մոդուլի դասիչը` ԱՅԱԽ – 3 – 08 - 001

Մոդուլի տևողությունը` 12 ժամ

Տեսական ուսուցում` 24 ժամ

Գործնական պարապմունքներ` 24 ժամ

Մոդուլի նպատակը`

Սովորողի մոտ ձևավորել ցանկացած բնագավառում առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու, հասկանալու և համապատասխան լուծումներ գտնելու կարողություններ:

Մուտքային պահանջները` Զկան

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է`

1. Կառավարի սթրեսը և ժամանակը:
2. Դրսևորի քննադատական մտածողություն:
3. Առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կառավարել սթրեսը և ժամանակը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. Ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները:
2. Ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան):
3. Ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել քննադատական մտածողություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. Ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը:
2. Ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ:
3. Իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. Բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում:
2. Ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ:
3. Ճիշտ է գնահատում է արդյունքը:
4. Բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները:
5. Ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է տալ դրանց արագ ու արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը հանդես է բերում, ըստ առաջադրված իրավիճակի, պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր, դիտակտիկ նյութեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ՍՈՊՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԱՐՀ - 3 – 08 - 001

Մոդուլի տևողությունը՝

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 30 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլի նպատակն է սովորողին տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, զարգացնելով սովորողի մոտ տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման և տպագրման հմտությունները:

Մուտքային պահանջները՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո սովորողը՝

1. Կհասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը:
2. Կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ:
3. Կկարողանա պահպանել փաստաթուղթը:
4. Կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ:
5. Կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ:
6. Կկարողանա տպագրել փաստաթուղթը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը
- *բացել* նոր փաստաթուղթ
- ստեղծաշարի օգնությամբ *մուտքագրել*
- *տեղաշարժել* Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ
- *կատարել* տարրական ուղղումներ տեքստում
- *փակել* փաստաթուղթը
- *բացել* առկա փաստաթուղթը
- *իմանալ* Zoom գործիքի հնարավորությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

1. Սովորողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը:
2. Սովորողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Սովորողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում:
3. Սովորողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղծաշարով Տեքստային ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները:
4. Սովորողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, համկարգիչներ և օժանդակ տեխնիկական միջոցներ, կիրառվող ծրագրային փաթեթներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 1 ժամ

Գործնական պարապմունք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. ՏԵՔՍՏԵՐԻ ՏԱՐՐԱԿԱՆ ՖՈՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *պատրաստել* Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար
- *նշել* բառերը և տեքստային հատվածները
- *կատարել* մուտքագրված տեքստի պարզագույն *ֆորմատավորում*
- *կատարել* տողերի հավասարեցում
- *փոխել* միջտողային տարածությունները
- *փոխել* տեքստի գույնը Font Color գործիքով
- *փոխել* տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով
- *փոխել* պարբերության խորությունները լուսանցքներից
- *չեղյալ հայտարարել* (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները
- *վերականգնել* ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները
- *կրկնել* ֆորմատավորման վերջին գործողությունը
- Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ
 - փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ
 - ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը
 - ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ
- *պատճենել* տեքստը
- *տեղափոխել* տեքստը

- տողադարձել տեքստը
- համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

1. Սովորողին մուտքագրելու համար տրվում է մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:
2. Սովորողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:
3. Սովորողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղնաշարով տեքստը նշելու հնարավորությունները:
4. Սովորողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Սովորողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:
5. Սովորողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:
6. Սովորողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, համկարգիչներ և օժանդակ տեխնիկական միջոցներ, կիրառվող ծրագրային փաթեթներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	1 ժամ
Գործնական պարապմունք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. ՓԱՏՆԱԹԴԹԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- *հմանալ* փաստաթղթերի պահպանման իմաստը
- *պահպանել* նոր ստեղծված փաստաթուղթը Save As... պատուհանի օգնությամբ
- *հմանալ* փաստաթղթի ընթացիկ պահպանման նշանակությունը, *պահպանել* փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

1. Սովորողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:
2. Սովորողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը:
3. Սովորողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, համկարգիչներ և օժանդակ տեխնիկական միջոցներ, կիրառվող ծրագրային փաթեթներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	1 ժամ
Գործնական պարապմունք՝	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. ԱՐՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԽՄԲԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- *պատրաստել* աղյուսակ
- աղյուսակի մեջ *մուտքագրել* տեքստ,
- *կատարել* ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ
- *ավելացնել* նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ
- *ջնջել* աղյուսակի տողերը և սյուները
- *փոխել* սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* աղյուսակի գծերի գույնը
- *գունավորել* աղյուսակի տողը և սյունը Shading Color գործիքով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

1. Սովորողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Սովորողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի:
2. Սովորողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, համկարգիչներ և օժանդակ տեխնիկական միջոցներ, կիրառվող ծրագրային փաթեթներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	1 ժամ
Գործնական պարապմունք`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒՄ ԵՎ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- *զժազրել* գրաֆիկական օբյեկտներ Draw, Line, Arrow, Rectangle, Oval գործիքներով
- *զժազրել* գրաֆիկական օբյեկտներ` օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը
- *զժազրել* կանոնավոր պատկերներ` օգտագործելով SHIFT ստեղնը
- *ֆորմատավորել* գրաֆիկական օբյեկտները`
 - տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ
 - պատճենել
 - պտտել
 - շրջել
 - փոխել չափերը
- *խմբավորել* գրաֆիկական օբյեկտները
- *հավասարեցնել* գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ
- *զժազրել* տեքստային բլոկներ
- *գունավորել* գրաֆիկական օբյեկտները Fill Color գործիքով
- *երանգավորել* գրաֆիկական օբյեկտները Fill Color գործիքի Fill Effect.s... հրամանով
- *ստվերավորել* գրաֆիկական օբյեկտները Shadow Style գործիքով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

1. Սովորողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Սովորողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա:
2. Սովորողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՅՈՒՐՄՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, համկարգիչներ և օժանդակ տեխնիկական միջոցներ, կիրառվող ծրագրային փաթեթներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	1 ժամ
Գործնական պարապմունք`	3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. ՓԱՏՍԱԹՂԹԻ ՏՊԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- *խմանալ* Նախադիտման (Print Preview) ռեժիմի նշանակությունը
- Նախադիտման ռեժիմում *թերթել* փաստաթուղթը
- *խմանալ* Print պատուհանի ֆունկցիաները
- *տպագրել* փաստաթուղթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

1. Սովորողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն:
2. Սովորողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՅՈՒՐՄՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, համկարգիչներ և օժանդակ տեխնիկական միջոցներ, կիրառվող ծրագրային փաթեթներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	1 ժամ
Գործնական պարապմունք`	1 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ, ՎԱՐՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝ ՏՄՇԱՎ – 3 – 08 – 001

Դասընթացի մատուցման ձևը

Տեսական ուսուցում՝ 24 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 30 ժամ

Մոդուլի նպատակը՝

Սովորողին ծանոթացնել ավտոմոբիլային տրանսպորտի մասին օրենքի հիմնական հասկացություններին, ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորմանը և կառավարմանը, ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների, ուղեբեռի և բեռների փոխադրումների կազմակերպմանը, փոխադրողի և պատվիրատուի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, փոխադրումների անվտանգությանը ներկայացվող պահանջները՝ այդ թվում ավտովարորդներին ներկայացվող պահանջները, վարորդի իրավունքները և պարտականությունները:

**Մուտքային պահանջներ՝ Զկան
Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է

1. Իմանա ավտոմոբիլային տրանսպորտի մասին ՀՀ օրենքի հիմնական հասկացությունների մեկնաբանությունը:
2. Գիտենա ավտոմոբիլային բնագավառում պետական կարգավորման և կառավարման հիմնադրույթները:
3. Գիտենա ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների, ուղեբեռի և բեռների փոխադրումների կազմակերպման սկզբունքները և հիմնադրույթները:
4. Գիտենա փոխադրողի և պատվիրատուի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:
5. Գիտենա փոխադրումների անվտանգությանը ներկայացվող հիմնական պահանջները:
6. Գիտենա վարորդին ներկայացվող պահանջները, հիմնական իրավունքները և պարտա-կանությունները:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ ավտոմոբիլային տրանսպորտի մասին ՀՀ օրենքի հիմնական հասկացությունների մեկնաբանությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. Գիշտ է մեկնաբանում օրենքի կարգավորման առարկան և գործողության ոլորտը:
2. Գիշտ է մեկնաբանում ավտոմոբիլային տրանսպորտ, ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառ, ավտոտրանսպորտային գործունեության հասկացությունները:
3. Գիշտ է մեկնաբանում ավտոտրանսպորտային գործունեության մասնակից, ավտոմոբիլային տրանսպորտի օբյեկտ, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտ, ավտոտրանսպորտային միջոց, շարժակազմ հասկացությունները:
4. Գիշտ է մեկնաբանում ավտոկայարան և ավտոկայարան երթակարգավորման կետ տերմինները:
5. Գիշտ է մեկնաբանում ավտոբուս, թեթև մարդատար ավտոմոբիլ, մարդատար տաքսի ավտոմոբիլ, երթուղային ավտոբուս, երթուղային տաքսի հասկացությունները:
6. Գիշտ է մեկնաբանում փոխադրումների տեսակները:
7. Գիշտ է մեկնաբանում ապրանքատրանսպորտային բեռնագիր, ճանապարհային թերթիկ, երթուղային թերթիկ հասկացությունները:
8. Գիշտ է մեկնաբանում ավտոմոբիլային տրանսպորտի շարժակազմի տեխնիկական շահա-գործում, տեխնիկական սպասարկումներ, նորոգումներ հասկացությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր թեստերի պատասխանների արդյունքի հիման վրա: Թեստում կառաջադրվեն առնվազն 8 հարցեր, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին»: ՀՀ օրենքի հիմնական հասկացությունների վերաբերյալ, 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե հարցերին տրվել են առնվազն 6 ճիշտ պատասխաններ: Իսկ մնացած պատասխաններում կարող են լինել որոշ ոչ լակական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքը, մասնագիտական համապատասխան գրականություն:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Գիտենալ ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորման և կառավարման հիմնադրույթները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. ճիշտ է մեկնաբանում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորման նպատակները:
2. ճիշտ է ներկայացնում պետական կարգավորման ձևերը ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում:
3. ճիշտ է մեկնաբանում ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի պետական կառավարումը:
4. ճիշտ է մեկնաբանում ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումները:
5. ճիշտ է մեկնաբանում լիցենզավորումը և ապահովագրությունը ավտոմոբիլային տրանսպորտում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր թեստերի պատասխանների արդյունքի հիման վրա: Թեստում կառաջադրվեն առնվազն 8 հարցեր, ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում: պետական կարգավորման և կառավարման հիմնադրույթների վերաբերյալ 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե հարցերին տրվել են առնվազն 6 ճիշտ պատասխաններ: Իսկ մնացած պատասխաններում կարող են լինել որոշ ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքը, մասնագիտական համապատասխան գրականություն:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 4 ժամ

Արդյունք 6 Իմանալ «Ճանապարհային երթևեկության կանոններ»-ի խաղտուններից բխող վարչական իրավախախտումները և նրանց համապատասխան սանկցիաները:

Կատարման չափանիշները

1. Ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում գործող ճանապարհային երթևեկության կանոնների իրավախաղտումների հոդվածի դիսպոզիցիան:
2. Ճիշտ է ներկայացնում ՎԻՎՕ հոդվածը, մասը և համաձայն վարչական իրավախաղտումների տեղեկատու-ի տուգանքաչափերը, առաջին, երկրորդ և երրորդ անգամ խաղտումների դեպքում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով, սովորողին կառաջադրվեն առնվազն 8 հարցեր, 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է «Ճանապարհային երթևեկության կանոնների» խախտումներից բխող վարչական իրավախախտումների և նրանց համապատասխան սանկցյաների վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են առնվազն 6 ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ ճանապարհային երթևեկության կանոնները, ՀՀ-ում գործող ճանապարհային երթևեկության կանոնների իրավախախտումների հոդվածների դիսպոզիցիան:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունք`	6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՆՎԱՆԳ ՎԱՐՄԱՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը` SUՇԱՎ – 3 - 08 - 005

Մոդուլի տևողությունը`	54 ժամ
Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական պարապմունքներ`	46 ժամ

Մոդուլի նպատակը`

Ավարտելով այս մոդուլը` սովորողը ձեռք կբերի ավտոմեքենայի անվտանգ վարման անհրաժեշտ հմտություններ և կիրառական գիտելիքներ:

Մուտքային պահանջները`

Սովորողը մինչև այս մոդուլի ուսումնասիրումը պետք է ծանոթ լինի «SUՇԱՎ-3-08-002», «SUՇԱՎ-3-08-003», «SUՇԱՎ-3-08-004» մոդուլներին:

Հատուկ պահանջներ`

Հոգեբանաֆիզիոլոգիական վիճակի և առողջության համապատասխանությունը վարորդին ներկայացվող պահանջներին:

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է.

1. Իմանա անվտանգ երթևեկության վրա ազդող ավտոմեքենայի հիմնական բնութագրերը և շահագործական գործոնները
2. Իմանա երթի ընթացքում հոգեբանաֆիզիոլոգիական կողմնորոշման առանձնահատկությունները
3. Տիրապետի ավտոմեքենայի վարման գործնական հմտություններին
4. Կարողանա վարել ավտոմեքենան իրական ճանապարհային պայմաններում:

Գնահատման կարգը`

Սողոուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովվումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ անվտանգ երթևեկության վրա ազդող ավտոմեքենայի հիմնական բնութագրերը և շահագործական գործոնները

Կատարման չափանիշները՝

1. Ճիշտ է շարադրում ավտոմեքենայի ծանրության կենտրոնի դիրքի և անվադողերի ճանապարհի հետ կցման ազդեցությունը անվտանգ երթևեկության վրա:
2. Ճիշտ է ներկայացնում միջին արագության և դանդաղեցման ընտրության նշանակությունը, իներցիայի և սահքի երևույթների դերը ավտոմեքենայի վարման ժամանակ:
3. Ճիշտ է շարադրում ավտոմեքենայի անցողականության և մանևրողականության ազդեցությունը անվտանգ երթևեկության վրա:
4. Ճիշտ է շարադրում ավտոմեքենայի կայունության և կառավարելիության ազդեցությունը անվտանգ երթևեկության վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանների միջոցով, սովորողը պետք է կարողանա ճիշտ և հստակ ներկայացնել անվտանգ երթևեկության վրա ազդող ավտոմեքենայի հիմնական բնութագրերը և շահագործական գործոնները: Սովորողին կառաջադրվի առնվազն 8 հարց՝ ավտոմեքենայի հիմնական բնութագրերի և շահագործական գործոնների վերաբերյալ, որոնք ազդում են անվտանգ երթևեկության վրա: Արդյունքի ձեռք բերումը կհամարվի դրական, եթե առնվազն 6 հարցերին տրվել է ճիշտ պատասխան, իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունք:

Անհրաժեշտ է ունենալ ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, գործնական պարապմունքների կատարման ուղեցույցներ, ավտոմեքենայի մոդելներ, պլակատներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	2	ժամ
Գործնական պարապմունք՝	2	ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ երթի ընթացքում հոգեբանաֆիզիոլոգիական կողմնորոշման առանձնահատկությունները

Կատարման չափանիշները՝

1. Ճիշտ է շարադրում տեսանելիության առանձնահատկությունները տարբեր բնակլիմայական ու ռելիեֆային պայմաններում, գործնականում ցուցաբերում տեսողության համապատասխան հմտություններ:
2. Ճիշտ է շարադրում տարածության և ժամանակի ընկալման կարևորությունը անվտանգ երթի ընթացքում և ցուցաբերում համապատասխան հմտություններ:
3. Ճիշտ է շարադրում ավտոմեքենայի հավասարակշռության ազդեցությունը անվտանգ փոխադրումների ժամանակ:
4. Ճիշտ է շարադրում ավտոմեքենայի և շրջապատի կողմից լրացուցիչ ձայնային, լուսային և այլ ազդանշանների ընկալման կարևորությունը ավտոմեքենայի շարժման ընթացքում և ցուցաբերում դրանց ընկալման համապատասխան հմտություններ:
5. Ճիշտ է մեկնաբանում այլ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կատարած սխալները և ցուցաբերում ճՏՊ-ից խուսափելու համապատասխան հմտություն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանների և գործնական հմտությունների ցուցաբերման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե հարցերին տրվել են ճիշտ և հստակ պատասխաններ, ցուցաբերվել է անհրաժեշտ գործնական հմտություններ: Պատասխաններում կարող են թույլատրվել որոշ ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ ուսումնավարժական, սարքեր, համակարգիչներ և համապատասխան փաթեթներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր, ուսումնավարժական ավտոմեքենաներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	2	ժամ
Գործնական պարապմունք՝	2	ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել ավտոմեքենայի վարման գործնական հմտություններին

Կատարման չափանիշները՝

1. Ելնելով երթևեկության անվտանգության, վարորդի հոգեբանաֆիզիոլոգիական պահանջներից՝ կարողանում է երթից առաջ ճիշտ դիրքավորվել վարորդի տեղում:
2. Աքսելերատոր
3. Կարողանում է կատարել ավտոմեքենայի սահուն տեղաշարժ կանգնած դիրքից:
4. Կարողանում է ճիշտ օգտվել ավտոմեքենայի ղեկային և արգելակային համակարգերի կառավարման օրգաններից:
5. Կարողանում է ճիշտ օգտվել լուսավորության, չափիչստուգիչ և ազդանշանային սարքերից:
6. Կարողանում է սահուն կերպով իրականացնել ավտոմեքենայի ուղիղ, հետադարձ և շրջադարձային շարժումներ:
7. Կարողանում է սահուն և վարժ կերպով իրականացնել փոխանցումների տուփի կառավարումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման վրա:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ցուցաբերում է ավտոմեքենայի վարման գործնական հմտություններին տիրապետելու անհրաժեշտ կարողություններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունքներ:

Արդյունքի ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել վարժասարքերի և ուսումնավարժական ավտոմեքենաների վրա: Անհրաժեշտ է ունենալ համակարգիչներ անհրաժեշտ փաթեթներով, ուսումնական համապատասխան գրականություն, պլակատներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ՂԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	2 ժամ
Գործնական պարապմունք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ վարել ավտոմեքենան իրական ճանապարհային շահագործական պայմաններում:

Կատարման չափանիշները`

1. Ճիշտ է կատարում ավտոմեքենայի դիրքավորումը և վերադիրքավորումը երթուղում` կախված ընտրված նպատակակետից և տրանսպորտային հոսքի ծանրաբեռնվածությունից:
2. Ճիշտ է իրականացնում միջանկյալ կանգառները և կանգառներից շարժումը երթի ժամանակ:
3. Ճիշտ է կիրառում ճանապարհային երթևեկության կանոնները շարժման ժամանակ:
4. Ճիշտ է վարում ավտոմեքենան քաղաքային և միջքաղաքային ճանապարհային պայմաններում:
5. Ճիշտ է վարում ավտոմեքենան տեսանելիության և ճանապարհային և շահագործական տարբեր պայմաններում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ցուցաբերում է ավտոմեքենայի վարման անհրաժեշտ հմտություններ` քաղաքային, միջքաղաքային, ճանապարհային-շահագործական և տեսանելիության տարբեր պայմաններում:

Ճանապարհային երթևեկության կանոնների խստագույս պահպանումը հանդիսանում է հիմնական պահանջ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ ուսումնավարժական մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, վարժասարքեր, համակարգիչներ անհրաժեշտ ծրագրային փաթեթներով, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ՂԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	2 ժամ
Գործնական պարապմունք`	36 ժամ

ՍՈՂՈՒԽԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԵՌՆԵՐԻ ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԲԵՌՆԱՆ-ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Սողուլի դասիչը` **ՏՄՇԱԿ – 3 – 08 - 006**

Դասընթացի մատուցման ձևը`

Տեսական ուսուցում`	22 ժամ
Գործնական պարապմունքներ`	24 ժամ

Սողուլի նպատակը`

Սովորողին ծանոթացնել բեռների տեսակներին, դրանց դասակարգման սկզբունքներին, բեռների փաթեթավորման և ամրացման պահանջներին, բեռնման բեռնաթափման գործընթացին, դրանց կատարման համար նախատեսված ժամանակի նորմերին, ինչպես նաև բեռնման բեռնաթափման ժամանակ առավել հաճախ օգտագործվող տեխնիկական միջոցներին:

Մուտքային պահանջները` 2կան
Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. Իմանա բեռների տեսակները և դրանց դասակարգման սկզբունքներին.
2. Իմանա բեռների փաթեթավորման և թափքում ամրացման ձևերը.
3. Ծանոթ լինի բեռնման բեռնաթափման գործընթացին, դրանցում օգտագործվող տեխնիկական միջոցներին.
4. Ծանոթ լինի բեռնման բեռնաթափման աշխատանքների ընթացքում բեռնատար ավտոմեքենաների համար սահմանված պարապուրդի նորմերին:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ բեռների տեսակները և դրանց դասակարգման սկզբունքները.
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. Գիշտ է բացատրում բեռների տեսակները և դրանց դասակարգման ընդհանուր սկզբունքները:
2. Գիշտ է ներկայացնում բեռների որակական հատկանիշները:
3. Գիշտ է ներկայացնում բեռների փոխադրման ժամանակ կորստի թույլատրելի նորմերը:
4. Գիշտ է ներկայացնում տարբեր բեռների փոխադրման համար անհրաժեշտ տրանսպորտա-յին միջոցները և դրանց ներկայացվող առանձնահատուկ պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով, սովորողին կառաջադրվեն բեռների տարբեր տեսակներ, սովորողը պետք է կարողանա բեռների որակական հատկանիշներից և տեսակներից ելնելով ճիշտ ընտրի փոխադրման ժամանակ կորստի թույլատրելի նորման: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական միայն ճիշտ պատասխանների դեպքում:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ բեռների տարբեր տեսակի նկարներ, պլակատներ, դասակարգման սկզբունքների վերաբերյալ պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, տրանսպորտային միջոցների ընդհանուր տեսքերի և տեխնիկական բնութագրերի վերաբերյալ դիտակտիկ նյութեր: Ուսուցման երաշխավորված ժամաքանակը տեսության ուսուցում.

ԴԱՍԸՆՑՈՒՄԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ բեռների փաթեթավորման և թափքում ամրացման ձևերը.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. Գիշտ ներկայացնում փոխադրական տարային և բեռների փաթեթավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները:
2. Գիշտ է ներկայացնում վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ փոխադրական տարային և փաթեթավորմանը ներկայացվող առանձնահատուկ պահանջները:
3. Գիշտ է ներկայացնում բեռների այն տեսակները, որոնք կարող են ներկայացվել փոխադրման առանց փաթեթավորման, ինչպես նաև այն բեռները որոնք պարտադիր ենթակա են փաթեթավորման:
4. Գիշտ է ներկայացնում բեռները թափքում ամրացնելու սկզբունքները և ձևերը:
5. Գիշտ է ներկայացնում բեռների այն տեսակները, որոնք պարտադիր ենթակա են ամրացման:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով` սովորողին կառաջադրվեն տարբեր տեսակի բեռներ, նա պետք է կարողանա ընտրել փոխադրման համար տարան, փաթեթավորման տեսակը և թափքում բեռի ամրացման ձևը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի ճիշտ, եթե տրվել են հարցին հիմնավորված ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ բեռների տարբեր տեսակների նկարներ, բնութագրերի պլակատներ, փաթեթավորման նյութերի և ձևերի վերաբերյալ դիտակտիկ նյութեր, ավտոմեքենաների ընդհանուր տեսքերի և տեխնիկական բնութագրերի պլակատներ, ուսումնական գրականություն, տեղեկատուներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ԴԱՍԸՆՑՈՒՄԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3 Ծանոթանալ բեռնման բեռնաթափման գործընթացին, դրանցում օգտագործվող տեխնիկական միջոցներին.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. Գիշտ է ներկայացնում բեռնման բեռնաթափման գործընթացը, այդ գործընթացի ազդեցությունը ավտոմոբիլի պարապուրդի և ընդհանուր արտադրողականության վրա,
2. Գիշտ է ներկայացնում բեռնման բեռնաթափման միջոցների դասակարգումը և դրանց աշխատանքի առանձնահատկությունները` այդ թվում.
 - ընդհանուր նշանակության և բարձր մանրայնության ավտոբեռնիչներ և էլեկտրաբեռնիչներ,
 - հատուկ նշանակության ավտոբեռնիչներ և էլեկտրաբեռնիչներ,
 - ամբարձիչ կռունկներ,
 - փոխակրիչներ
 - բեռնման բեռնաթափման պնևմատիկ և հիդրավլիկ միջոցներ
3. Գիշտ է ներկայացնում բեռնման բեռնաթափման միջոցների կիրառման արդյունավետությունը տարբեր բեռների բեռնման բեռնաթափման ժամանակ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով: Սովորողին կառաջադրվեն տարբեր տեսակի բեռներ և բեռնման բեռնաթափման պայմաններ: Սովորողը պետք է ընտրի համապատասխան բեռնման բեռնաթափման միջոցը և գնահատի բեռնման բեռնաթափման ազդեցությունը ավտոմոբիլի պարապուրդի և արտադրողականության վրա:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են հիմնավորված ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի բեռների բնութագրերի պլակատներ, բեռնման բեռնաթափման միջոցների ընդհանուր տեսքերի և տեխնիկական բնութագրերի դիտակտիկ նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, բեռնման բեռնաթափման միջոցների տարբեր ազդեցատների մեխանիզմների և համակարգերի մոդելներ, նմուշներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	10	ժամ
Գործնական պարապմունք`	12	ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ծանոթանալ բեռնման բեռնաթափման աշխատանքների ընթացքում բեռնատար ավտոմեքենաների համար սահմանված պարապուրդի նորմերին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

1. Ճիշտ է ներկայացնում բեռնման բեռնաթափման աշխատանքների ժամանակ բեռնատար ավտոմեքենաների պարապուրդի վրա ազդող գործոնները,
2. Ճիշտ է շարադրում բեռնման բեռնաթափման աշխատանքների ընթացքում բեռնատար ավտոմեքենայի պարապուրդի ժամանակի ընդհանուր կառուցվածքը և այդ ժամանակի առանձին տարրերի նվազեցման միջոցառումները,
3. Ճիշտ է շարադրում ձեռքով բեռնման բեռնաթափման ժամանակ պարապուրդի նորմով սահմանված բեռնակիրների պահանջվող թվաքանակի որոշումը,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով ուսանողին կառաջադրվեն առնվազն 5 հարցեր 3 պատասխանով, որոնցից 1-ը ճիշտ է, բեռնատար ավտոմեքենաների պարապուրդի ընդհանուր կառուցվածքի առանցքի տարրերի նվազեցման միջոցառումների և ավտոմեքենայի պարապուրդի վրա ազդող գործոնների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են առնվազն 4 ճիշտ պատասխաններ:

Մյուս պատասխանում կարող են լինել որոշ ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի բեռների բնութագրերի պլակատներ, բեռնման բեռնաթափման միջոցների ընդհանուր տեսքերի և տեխնիկական բնութագրերի դիտակտիկ նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, բեռնման բեռնաթափման միջոցների տարբեր ազդեցատների մեխանիզմների և համակարգերի մոդելներ, նմուշներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	2	ժամ
Գործնական պարապմունք`	2	ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱ-ՌՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը` **SՄՇԱՎ – 3 - 08 - 007**

Մոդուլի տևողությունը`	72	ժամ
Տեսական ուսուցում`	34	ժամ
Գործնական պարապմունքներ`	38	ժամ

Մոդուլի նպատակը`

Սովորողին ծանոթացնել ուղևորների և տարբեր տեսակի բեռների փոխադրման գործընթացների առանձնահատկություններին և այդ փոխադրումների ժամանակ շրջանառվող փաստաթղթերի ձևակերպման սկզբունքներին:

Մուտքային պահանջները`

Սովորողը մինչ այս մոդուլի ուսումնասիրումը պետ է յուրացրած լինի «SՄՇԱՎ-3-08-002», «SՄՇԱՎ-3-08-006» մոդուլները

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է`

1. Իմանա փոխադրումների երթուղիների դասակարգումը (ճոճանակային, շրջանաձև և այլն), երթուղիները բնութագրող հիմնական ցուցանիշները, առանձնահատկություններ և տարրերը:
2. Կարողանա օգտվել քարտեզներից և տեղանքի հատակագծերից փոխադրումների երթուղիները ուսումնասիրելու համար:
3. Իմանա փոխադրումների կազմակերպման գործընթացի հիմնական բաղադրիչները և այդ փոխադրումների ժամանակ վարորդի պարտականությունները:

4. Իմանա տարբեր տեսակի բեռների փոխադրման գործընթացների առանձնահատկությունները և այդ փոխադրումների ժամանակ վարորդի պարտադիր գործողությունները:

5. Իմանա փոխադրումների ժամանակ շրջանառվող փաստաթղթերի տեսակները և դրանց ձևակերպման սկզբունքները:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ փոխադրումների երթուղիների դասակարգումը (ճոճանակային, շրջանաձև և այլն), երթուղիները բնութագրող հիմնական ցուցանիշները և առանձնահատկությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

1. Գիշտ է բացատրում աշխատանքայի վազք, պարապ ընթացք, զրոյական վազք հասկացությունները, ունի պատկերացում վազքի օգտագործման գործակիցների մասին:

2. Գիշտ է բացատրում ուղևորափոխադրումների հիմնական ցուցանիշները և դրանց ազդեցությունը փոխադրման գործընթացի արդյունավետության վրա:

3. Գիշտ է բացատրում բեռնափոխադրումների հիմնական ցուցանիշները` բեռնատարողություն, բեռնատարողության գործակից, թափքի լցավորման գործակից, և դրանց ազդեցությունը փոխադրման գործընթացի արդյունավետության վրա:

4. Գիշտ է բացատրում երթի, շրջապտույտի և պարապուրդի ժամանակներ հասկացությունները, պատկերացում ունի ավտոմեքենայի արտադրողականության մասին:

5. Գիշտ է շարադրում փոխադրումների երթուղիների տեսակները և դրանց առանձնահատկությունները:

6. Կարողանում է տարբեր երթերի համար գնահատել փոխադրումների շահագործական ծախսերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով ուսանողին կառաջադրվեն երթուղիների դասակարգման հիմնական ցուցանիշների և առանձնահատկությունների վերաբերյալ առնվազն 10 հարցեր 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե առնվազն 8 հարցերին տրվել են ճիշտ պատասխաններ, իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ փոխադրումների դասակարգման սխեմայի, տարբեր երթուղիների պլակատներ, փոխադրումների հիմնական ցուցանիշների վերաբերյալ պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական պարապմունք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ օգտվել քարտեզներից և տեղանքի հատակագծերից փոխադրումների երթուղիները ուսումնասիրելու համար

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

1. Գիշտ է ներկայացնում տեղանքի հատակագծի և քարտեզի մասշտաբների տեսակները և կարողանում է օգտվելով քարտեզներից երկու կետերի միջև եղած հեռավորությունը հաշվելու համար,

2. Գիշտ է բացատրում տեղանքի հատակագծերի և քարտեզների հորիզոնական գծերի իմաստը և կարողանում է օգտագործել դրանք տվյալ կետի հարաբերական և բացարձակ բարձրությունը հաշվարկելու համար:

3. Գիշտ է մեկնաբանում տեղանքի քարտեզների և հատակագծերի վրա կատարված պայմանական նշանակումների իմաստը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է կոնկրետ աշխատանքի կատարման հիման վրա: Սովորողին կառաջադրվի որոշել տեղանքի հատակագծի կամ քարտեզի վրա 2 կետերի միջև եղած հեռավորությունը, այդ կետերի հարաբերական և բացարձակ բարձրությունը, մեկնաբանել պայմանական որոշ նշանակումների իմաստը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ տեղանքի հատակագծեր, պայմանական նշանակումների նկարներ և պլակատներ, դիտակտիկ նյութեր, ուսումնական համապատասխան գրականություն:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական պարապմունք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ փոխադրումների կազմակերպման գործընթացի հիմնական բաղադրիչները և այդ փոխադրումների ժամանակ վարորդի պարտականությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

1. Գիշտ է ներկայացնում ուղևորափոխադրման գործընթացի հիմնական բաղադրիչները (ուղևորների նստեցում իջեցում, ուղեբեռի տեղակայումը բեռնախցիկում, վարձավճարի ստացում և այլն) և այդ փոխադրումների ժամանակ վարորդի պարտականությունները:

2. Ճիշտ է ներկայացնում բեռնափոխադրումների գործընթացների հիմնական բաղադրիչները (ավտոմեքենայի մատակարարումը բեռնման, բեռնաման բեռնաթափման գործընթաց, բեռի հանձնումը, բեռի վերաբեռնումը և փոխանցումը այլ փոխադրողի) և այդ փոխադրումների ժամանակ վարորդի գործողությունները:
3. Ճիշտ է ներկայացնում երթի դուրս գալուց առաջ, ինչպես նաև երթից վերադառնալուց հետո ավտոմեքենայի հետ կապված պարտադիր գործողությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով ուսանողին կառաջադրվեն առնվազն 8 հարցեր ուղևորա և բեռնափոխադրումների գործընթացների հիմնական բաղադրիչների և վարորդի պատասխանատվությունների վերաբերյալ 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են առնվազն 6 ճիշտ պատասխաններ: Իսկ մնացած պատասխաններում, իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների գործընթացների հիմնական բաղադրիչների վերաբերյալ պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	8	ժամ
Գործնական պարապմունք`	6	ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ տարբեր տեսակի բեռների փոխադրման գործընթացները և այդ փոխադրումների ժամանակ վարորդի պարտադիր գործողությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

1. Ճիշտ է ներկայացնում տարբեր տեսակի բեռների փոխադրման գործընթացների ընդհանուր նկարագիրը, և այդ փոխադրումների ժամանակ վարորդի պարտադիր գործողությունները:
2. Ճիշտ է ներկայացնում ծանրաքաշ և ոչ գաբարիտային բեռների փոխադրման առանձնահատկությունները, կանոնները, կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
3. Ճիշտ է ներկայացնում վտանգավոր բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները, կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
4. Ճիշտ է ներկայացնում պայթուցավտանգ բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները, կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
5. Ճիշտ է ներկայացնում շուտ փչացող բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները , կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
6. Ճիշտ է ներկայացնում սորուն և կիտովի բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները , կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
7. Ճիշտ է ներկայացնում հեղուկ բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները , կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
8. Ճիշտ է ներկայացնում հատային բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները , կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
9. Ճիշտ է ներկայացնում շինարարական բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները, կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
10. Ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները, կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
11. Ճիշտ է ներկայացնում բեռնարկղերով բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները , կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:
12. Ճիշտ է ներկայացնում կենդանական բեռների փոխադրման առանձնահատկությունները և կանոնները, կարողանում առաջարկել համապատասխան տրանսպորտային միջոց:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով ուսանողին կառաջադրվեն առնվազն 4 տարբեր տեսակի բեռներ, սովորողը պետք է ներկայացնի փոխադրման ընդհանուր գործընթացի նկարագիրը, փոխադրման առանձնահատկությունները և կանոնները, առաջարկի համապատասխան տրանսպորտային միջոցը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, միայն հիմնավորված ճիշտ պատասխանների դեպքում:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի բեռների և տրանսպորտային միջոցների, ընդհանուր տեսքերի և նյութերի պլակատները, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ, անհրաժեշտությամբ դեպքում նաև տեսաֆիլմեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Իմանալ փոխադրումների ժամանակ շրջանառվող փաստաթղթերի տեսակները և դրանց ձևակերպման սկզբունքները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. ճիշտ է ներկայացնում ուղևորափոխադրումների ժամանակ շրջանառվող փաստաթղթերի տեսակները և դրանց ձևակերպման սկզբունքները:
2. ճիշտ է ներկայացնում բեռնափոխադրումների ժամանակ շրջանառվող փաստաթղթերի տեսակները և դրանց ձևակերպման սկզբունքները:
3. ճիշտ է ներկայացնում վարորդի գործողությունները կապված բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ժամանակ շրջանառվող փաստաթղթերի պահպանման, ներկայացման և հանձնման կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է կոնկրետ աշխատանքի կատարման հիման վրա, սովորողին կառաջադրվեն ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ժամանակ շրջանառվող փաստաթղթերի տեսակներ: Սովորողը դրանք պետք է ձևակերպի առաջադրված ժամանակում:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, միայն ճիշտ ձևակերպումների դեպքում:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ փոխադրումների ժամանակ շրջանառվող փաստաթղթերի տեսակների նմուշներ, ուսումնական համապատասխան գրականություն, տեղեկատուներ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՐԳԵԼՈՂ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԱՅՄԱՆՆԵՐԸ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ՝ *10ԻՉ – 3 – 08 - 008*

Մոդուլի տևողությունը՝ 46 ժամ
Տեսական ուսուցում՝ 24 ժամ
Գործնական պարապմունքներ՝ 22 ժամ

Մոդուլի նպատակը՝

Ավարտելով այս մոդուլը սովորողը ձեռք կբերի բավարար տեսական և գործնական գիտելիքներ ավտոմոբիլի շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների վերաբերյալ:

Մուտքային պահանջները՝

Սովորողը մինչև այս մոդուլի ուսումնասիրումը պետք է իմանա «ՏՄՇԱՎ-3-08-002», «ՏՄՇԱՎ-3-08-005» մոդուլները:

Ուսումնասիրության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է

1. Իմանա արգելակային և դեկային կառավարման համակարգերի անսարքություններն ու ավտոմեքենայի շահագործումն արգելող պայմանները:
2. Իմանա արտաքին լուսային սարքերի անսարքություններն ու ավտոմեքենայի շահագործումն արգելող պայմանները:
3. Իմանա անիվների և դողերի անսարքությունները և ավտոմեքենայի շահագործումն արգելող պայմանները:
4. Իմանա շարժիչի անսարքությունները, ավտոմեքենայի այլ անսարքություններն ու շահագործումն արգելող պայմանները:

Գնահատման միջոցը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ արգելակային և ղեկային կառավարման համակարգերի անսարքություններն ու ավտոմեքենայի շահագործումն արգելող պայմանները:

Կատարման չափանիշները

1. Ճիշտ է ներկայացնում այն պայմանները, որոնք վերաբերվում են արգելակային համակարգի այն անսարքություններին, որոնց դեպքում ավտոմոբիլի շահագործումը արգելվում է:
2. Ճիշտ է ներկայացնում այն պայմանները, որոնք վերաբերվում են ավտոմոբիլի ղեկային կառավարման համակարգի այն անսարքություններին, որոնց դեպքում ավտոմոբիլի շահագործումը արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով, սովորողին կառաջադրվեն առնվազն 6 հարցեր 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է, արգելակային և ղեկային կառավարման համակարգերի անսարքությունների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են միայն ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ տրանսպորտային միջոցների, շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատված ՀՀ կառավարության 2007թ-ի հունիսի 28-ի N955-Ն որոշումով, ճանապարհային երթևեկության կանոնները, ուսումնական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	8	ժամ
Գործնական պարապմունք`	6	ժամ

Արդյունք 2. Իմանալ արտաքին լուսային սարքերի անսարքություններն ու ավտոմեքենայի շահագործումն արգելող պայմանները:

Կատարման չափանիշները

1. Ճիշտ է ներկայացնում արտաքին լուսային սարքերի այն հնարավոր անսարքությունները, որոնց դեպքում ավտոմոբիլների հետագա շահագործումը անթույլատրելի է
2. Ճիշտ է ներկայացնում լապտերների կարգավորումը, արտաքին լուսավորման սարքերի աշխատանքային ռեժիմները, լուսաանդրադարձների աղտոտվածության աստիճանը, առկայծող փարոսիկների տեղակայումը, արտաքին լուսային սարքերի ստանդարտների անհամապատասխանությունը, որոնց դեպքում ավտոմեքենայի հետագա շահագործումը անթույլատրելի է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով, սովորողին կառաջադրվեն առնվազն 6 հարցեր 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են միայն ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ տրանսպորտային միջոցների, շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատված ՀՀ կառավարության 2007թ-ի հունիսի 28-ի N955-Ն որոշումով, ճանապարհային երթևեկության կանոնները, ուսումնական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	4	ժամ
Գործնական պարապմունք`	4	ժամ

Արդյունք 3. Իմանալ անիվների և դողերի անսարքությունները և ավտոմեքենայի շահագործումն արգելող պայմանները

Կատարման չափանիշները

1. Ճիշտ է ներկայացնում դողերի պահպանաչերտերի նախշանկարի մնացորդային բարձրության ստանդարտային չափերը, որոնց խաղտման դեպքում արգելվում է ավտոմեքենայի շահագործումը:
2. Ճիշտ է ներկայացնում դողերի հենքերի տեղային վնասվածքները /անցքեր, կտրվածքներ, ճեղքակտրվածքներ/, ինչպես նաև հիմնակմախքի շերտաբաժանումը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում շահագործել ավտոմեքենան:
3. Ճիշտ է բացատրում անվահեծի կամ անվասկավառակի ամրացումը, հնարավոր ճաքերը, որոնց առկայության դեպքում ավտոմեքենայի հետագա շահագործումը անթույլատրելի է:
4. Ճիշտ է բացատրում այն դողերի` ըստ չափերի կամ թույլատրելի բեռնվածության, համապատասխանությունը ավտոմեքենայի տվյալ մոդելին:
5. Ճիշտ է բացատրում այն երևույթները, որոնք կառաջանան, երբ ավտոմեքենայի նույն սոնու վրա տեղակայվեն տարբեր նախշանկարներով կամ շառավիղներով դողեր, ինչպես նաև մեկնաբանում դրանց անթույլատրելիությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով, սովորողին կառաջադրվեն 6 հարցեր, անիվների և դողերի անսարքությունների և ավտոմեքենայի շահագործումն արգելող պայմանների վերաբերյալ, 3 պատասխանով, որոնցից 1-ը ճիշտ է: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե տրվել են միայն ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ տրանսպորտային միջոցների, շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատված ՀՀ կառավարության 2007թ-ի հունիսի 28-ի N955-Ն որոշումով, ճանապարհային երթևեկության կանոնները, ուսումնական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 4 ժամ

Գործնական պարապմունք` 2 ժամ

Արդյունք 4. Իմանալ շարժիչի անսարքությունները, ավտոմեքենայի այլ անսարքություններն ու շահագործումն արգելող պայմանները:

Կատարման չափանիշները

1. Ճիշտ է ներկայացնում արտածվող գազերում վնասակար նյութերի պարունակությունը կամ դրանց ծխայնությունը գերազանցում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ցուցանիշները:
2. Ճիշտ է ներկայացնում այն բոլոր հնարավոր դեպքերը երբ խախտված է սնման համակարգի հերմետիկությունը:
3. Ճիշտ է ներկայացնում բանած գազերի արտածման համակարգի անսարքությունները:
4. Ճիշտ է ներկայացնում այն դեպքը, երբ արտաքին աղմուկի թույլատրելի մակարդակը գերազանցում է ստանդարտով սահմանված մեծությունը:
5. Ճիշտ է ներկայացնում այն բոլոր անսարքություններն ու պայմանները, որոնց դեպքում չի թույլատրվում ավտոմեքենայի հետագա շահագործումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարցատոմսերով, ուսանողին կառաջադրվեն առնվազն 12 հարցեր, 3 պատասխաններով, որոնցից 1-ը ճիշտ է, շարժիչի և տրանսպորտային միջոցի այլ անսարքությունների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական առնվազն 10 ճիշտ պատասխանների դեպքում, մնացած պատասխաններում թույլատրվում են ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ:

Անհրաժեշտ է ունենալ տրանսպորտային միջոցների, շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատված ՀՀ կառավարության 2007թ-ի հունիսի 28-ի N955-Ն որոշումով, ճանապարհային երթևեկության կանոնները, ուսումնական համապատասխան գրականություն, դիտակտիկ նյութեր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 8 ժամ

Գործնական պարապմունք` 10 ժամ